Գործ ԵԴ/14217/02/23

ՈՐՈՇՈՒՄ

հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

14.04.2023թ. **ք.Երևան**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ Էդ. Ամալյանս ծանոթանալով՝ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված հայցադիմումին ընդդեմ պատասխանող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, երրորդ անձ «Սիներջի» ինթերնեյշնըլ սիսթեմզ ԲԸ մասնաճյուղի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար՝ «Հանրային ներդրումային ծրագրերի բանկի ստեղծման (հանրային ներդրումային ծրագրերի ինտեգրված թվային համակարգի ձևավորման)» ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԷՆ-ԵՄԾՁԲ-22/75 ծածկագրով երկու փուլով մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.03.2023թ. թիվ 7 արձանագրության 2.1 կետով «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները անվավեր ճանաչելու, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի 31.03.2023թ. թիվ 8 արձանագրության 2.1 կետով «Սիներջի ինթերնեյշնըլ սիսթեմզ» ԲԸ մասնաճյուղին ընթացակարգի հաղթող ճանաչելու և «Սիներջի ինթերնեյշնըլ սիսթեմզ» ԲԸ մասնաճյուղի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները անվավեր ճանաչելու պահանջների մասին՝

ՊԱՐԶԵՑԻ

Հայցվորի անունից 10.04.2023թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ պատասխանող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, երրորդ անձ «Սիներջի» ինթերնեյշնըլ սիսթեմզ ԲԸ մասնաճյուղի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար՝ «Հանրային ներդրումային ծրագրերի բանկի ստեղծման (հանրային ներդրումային ծրագրերի ինտեգրված թվային համակարգի ձևավորման)» ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԷՆ-ԵՄԾՁԲ-22/75 ծածկագրով երկու փուլով մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.03.2023թ. թիվ 7 արձանագրության 2.1 կետով «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները անվավեր ճանաչելու, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի 31.03.2023թ. թիվ 8 արձանագրության 2.1 կետով «Սիներջի ինթերնեյշնըլ սիսթեմզ» ԲԸ մասնաճյուղին ընթացակարգի հաղթող ճանաչելու և «Սիներջի ինթերնեյշնըլ սիսթեմզ» ԲԸ մասնաճյուղի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները անվավեր ճանաչելու պահանջների մասին:

ԷԴՈՒԱՐԴ ԱՄԱԼՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

Հայցադիմումը 10.04.2023թ-ին մակագրվել է դատավոր Էդ. Ամալյանին, դատավորի աշխատակազմին է հանձնվել 11.04.2023թ-ին:

Հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումում պահպանվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-125-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով սահմանված պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածների 27.2-րդ գլխի իրավական կարգավորումների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Պատասխանողից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապացույցները՝ այն է սույն գործով գնման գործընթացի հետ կապված պատասխանողների տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Էդ. Ամալյան**